Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
մայիսի 30-ի N 814 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՎՏԱՆԳԱՎՈՐ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԽՄԲԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈՒ ՊԱՀՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կողմից վերահսկողության ընթացքում բացահայտված Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան ընդունված փաստաթղթերով սահմանված՝ արտադրանքին ներկայացվող անվտանգության պահանջներին չհամապատասխանող արտադրանքի (այսուհետ՝ վտանգավոր արտադրանք) խմբաքանակի հաշվառման ու պահման իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի դրույթները տարածվում են նաև այն դեպքերի վրա, երբ տնտեսավարող սուբյեկտն է պարզում կամ հիմքեր ունի ենթադրելու, որ իր կողմից շրջանառության մեջ դրված արտադրանքը հակասում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված նորմերին:

3. Տեսչական մարմնի կողմից իրականացված վերահսկողության արդյունքների հիման վրա տեսչական մարմինն արտադրանքը վտանգավոր ճանաչելու մասին ընդունում է համապատասխան որոշում կամ արձակում կարգադրագիր:

4. Սույն կարգի 3-րդ կետով նախատեսված որոշման մեջ նշվում է վտանգավոր արտադրանքի վտանգի աղբյուրի վերաբերյալ:

5. Վտանգավոր արտադրանքի խմբաքանակը ենթակա է առանձին հաշվառման ու պահման՝ հետագայում օգտահանելու կամ ոչնչացնելու համար:

6. Տեսչական մարմինը վարում է վտանգավոր արտադրանքի հաշվառման մատյան՝ համաձայն ձևի:

7. Վտանգավոր արտադրանքի վերաբերյալ սույն կարգի 6-րդ կետով նախատեսված մատյանը նաև թվայնացվում է և պահպանվում տեսչական մարմնի բազայի ցանցում:

8. Տեսչական մարմնի կողմից վտանգավոր արտադրանքի մասին տեղեկատվությունը տրվում է շահագրգիռ մարմիններին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Վտանգավոր արտադրանքի պահման գործընթացն իրականացնում է այն տնօրինող տնտեսավարող սուբյեկտը՝ իր միջոցների հաշվին, անձամբ կամ համապատասխան կազմակերպության միջոցով:

10. Վտանգավոր արտադրանքը պահվում է դրա համար նախատեսված սենյակում կամ սենյակի առանձին հատվածում, եթե սենյակի մնացած ապրանքների համար վտանգ չի ներկայացնում՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված հրդեհային անվտանգության կանոնները:

Ձև

ՄԱՏՅԱՆ
ՎՏԱՆԳԱՎՈՐ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

NN ը/կ	Վտանգավոր արտադրանքի անվանումը, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Վտանգավոր արտադրանքի ներմուծման, արտադրման, իրացման տարեթիվը, ամիսը, օրը	Տուժողի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը	Վտանգավոր արտադրանք արտադրող տնտեսավա-րող սուբյեկտի անվանումը, ՀՎՀՀ	Վտանգավոր արտադրանք իրացնող տնտեսավա-րող սուբյեկտի անվանումը, ՀՎՀՀ	Վտանգավոր արտադրանք ներմուծող տնտեսավարող սուբյեկտի անվանումը, ՀՎՀՀ	Վտանգավոր արտադրանքի բացահայտման վայրը	Վտանգավոր արտադրանքի բնույթը՝ վտանգավոր արտադրանքի հանգամանք-ների և պատճառների համառոտ նկարագիրը	Արտադրանքը վտանգավոր ճանաչելու մասին որոշման համարը և կազմման տարեթիվը, ամսաթիվը	Վտանգավոր արտադրանքի հետևանքները
1	2	3	4	5	6	7	8	9	10	11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

31.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ